Արձանագրություն 3

«ՀՊՏՀ ԳՄ» ՊՈԱԿ-ի կարիքների համար ՀՊՏՀ-ԳՄ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով համակարգիչների և համակարգչային սարքավորումների ձեռքբերման համար գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.03.2019թ.

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

1. Ա. Սարգսյան – SS և տեխնիկական աջակցության կենտրոնի վարիչ

Հանձնաժողովի անդամներ՝

- ՀՀակոբյան – տնօրենի օգնական
- Ա. Մինասյան – գլխՀհաշվապահ

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ավետիսյան

Օրակարգ

1. Ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցների մասին

1.1 Հաշվի առնելով, որ **ՀՊՏՀ-ԳՄ-ԳՀԱՊՁԲ-19/10** ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4-րդ չափաբաժիններդի մասով առաջին տեղ զբաղեցրած Լիանա Կարապետյան Ա/Ձ-ի, հարկային պարտավորությունների ստուգման համար ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ստացել է պատասխան, այն է՝ Լիանա Կարապետյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 14555 (տասնչորս հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների ընթացակարգին մասնակցության իրավունք չունեն այն մասնակիցները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Քանի որ Լիանա Կարապետյան Ա/Ձ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը /14555 ՀՀ դրամ/ գերազանցում է իր ներկայացրած գնային առաջարկի 1

տոկոսը, ուստի գնահատող հանձնաժողովը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն որոշեց.

ա/ Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված <<գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 44-րդ կետով՝ որոշեց մերժել Լիանա Կարապետյան Ա/Ձ-ի հայտը 1, 2, 3 և 4-րդ չափաբաժինների մասով և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

բ/ ՀՊՏՀ-ԳՄ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով ընթացակարգի 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Գ. Շահպարոնյան>> ՍՊԸ-ին:

գ/ Քանի որ 1,2,3-րդ չափաբաժինների մասով <<Գ. Շահպարոնյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային գինը, ուստի ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն 2019 թ.-ի մարտի 26-ին ժամը 12:00-ին <<Գ. Շահպարոնյան>> ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման բանակցությունների, որը տեղի կունենա ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32 հասցեում 10 րոպե տևողությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

դ/ <Գ. Շահպարոնյան>> ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Հակոբյան

_____ Ա. Մինասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Ավետիսյան